ՄԱՆՈՒԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդվածում անդրադարձ է կատարվել իրավունքի տեսության արդիական խնդիրներից մեկին՝ հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց տարանջատման հիմնահարցին: Աշխատանքում էական ուշադրության է արժանացել հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց կողմից հիմնական իրավունքներն ու ազատությունները կրելու հետ կապված առանձնահատկությունները: Փորձ է արվել հիմնահարցը ներկայացնել այլ պետությունների դրական և նախադեպային իրավունքի լույսի ներքո: Հատուկ շեշտադրում է կատարվել նաև ՄԻԵԴ- ի հիմնահարցի հետ կապված իրավական դիրքորոշումների վրա:

Հիմնաբառեր *- հանրային իրավունքի իրավաբանական անձ, մասնավոր իրավունքի իրավաբանական անձ, հիմնական իրավունքներ, նախադեպային իրավունք:*

Ընդհանուր դրույթներ: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի վերնագրից («Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները») և 2-րդ գլխի առանձին հոդվածների՝ սուբյեկտիվ հիմնական իրավունքի կրողին որոշակիացնող ձևակերպումներից («յուրաքանչյուրը», «յուրաքանչյուր ոք», «յուրաքանչյուր քաղաքացի» և այլն) բխում է, որ նման կարգավիճակում հանդես է գալիս մարդը: Ժամանակակից պետությունների սահմանադրություններում կարող ենք հանդիպել այնպիսի ձևակերպումների, որ «հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ»[1]: Համարժեք բովանդակություն ունեցող ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածը հնարավորություն է տալիս հիմնական իրավունքների կրող համարել նաև իրավաբանական անձանց՝ պայմանով, որ այդ իրավունքները և ազատությունները կիրառելի լինեն վերջիններիս նկատմամբ:

Հատկանշական է, որ առանձին պետությունների սահմանադրություններում բացակայում են իրավաբանական անձանց հիմնական իրավունքների և ազատությունների կրող լինելու վերաբերյալ իրավակարգավորումները, ինչի պայմաններում կասկածի տակ է դրվում իրավաբանական անձանց դրանցով պաշտպանվելու սահմանադրական հնարավորությունը: Նման պետություններից է նաև Ռուսաստանի Դաշնությունը: ՌԴ գործող Սահմանադրությունը, ի տարբերություն իր նախորդի, չի հիշատակում քննարկվող հիմնախնդրի վերաբերությամբ իրավաբանական անձանց մասին: Ավելին, Սահմանադրության ընդունումից հետո ձևավորված դատական պրակտիկան ևս հետևողականորեն մերժում էր իրավաբանական անձանց հիմնական իրավունքներով պաշտպանվելու հնարավորությունը[2]: Հիմնախնդրի վերաբերյալ համարժեք մոտեցումների կարող ենք հանդիպել նաև դոկտրինալ մակարդակում[3]: Ռուսական իրավաբանական գրականության մեջ առկա է նաև խիստ զգուշավոր, սակայն վերը նշված մերժողական տեսակետներից տարբերվող կարծիքներ ևս: Այս առումով ուշագրավ է հատկապես Ն.Վ. Վիտրուկի այն դիրքորոշումը, որ Սահմանադրական դատարանն իր պրակտիկայում պաշտպանում է ոչ միայն մարդու և քաղաքացու անհատական իրավունքները, այլև մարդկանց կոլեկտիվների, մունիցիպալ միավորումների, գյուղական և քաղաքային միավորների կոլեկտիվ իրավունքները[4]:

Ինչպես նշվեց, այլ է պոզիտիվ իրականությունը ՀՀ-ում: ՀՀ Սահմանադրության և՛ գործող, և՛ 2005 թվականի խմբագրությամբ տեքստերում (հոդված 42.1) իրավաբանական անձինք ևս ճանաչվում են սուբյեկտիվ հիմնական իրավունքների կրող: Եթե հայ իրավական միտքն իրավաբանական անձանց՝ իրենց վերաբերելի սուբյեկտիվ հիմնական իրավունքների կրող ճանաչելու վերաբերությամբ սկզբունքորեն միակարծիք է, ապա այլ է վիճակը[5] օրենսդրության մեջ և դատական պրակտիկայում մասնավոր և հանրային իրավունքի իրավաբանա-

www.journal.lawinstitute.am

կան անձանց տարբերակման անհրաժեշտության վերաբերությամբ:

Իրավաբանական անձը, որպես հիմնական իրավունքների և ազատությունների կրող: Այն, որ ազգային գործող սահմանադրական լուծումները երաշխավորում են հիմնական իրավունքների միջոցով իրավաբանական անձանց իրավական դիրքի պաշտպանությունն, ակնհայտ է: Սակայն այստեղ կարևոր է, թե ինչում է իրավաբանական անձանց (իրենց վերաբերելի) հիմնական իրավունքներից օգտվելու հնարավորության ճանաչման անհրաժեշտությունը: Իրավաբանական անձանց հիմնական իրավունքների կրող համարելու վերաբերյալ սահմանադրական լուծումները, մեզ հետաքրքրող ասպեկտով, անհրաժեշտ է դիտարկել իրավասուբյեկտության տեսանկյունից: Եթե իրավաբանական անձանց վրա չեն տարածվում հիմնական իրավունքները, հնարավոր չէ նրանց վրա դնել նաև սահմանադրական այնպիսի պարտականություններ, ինչպիսիք են՝ հարկեր, տուրքեր վճարելը, շրջակա միջավայրի պաշտպանությունը: Նման պարտականություններն իրավաբանական անձանց սահմանադրական դիրքի բաղկացուցիչ մասն են: Արժեքավոր է ՌԴ ՍԴ գլխավոր խորհրդատու Վ. Կուզնեցովի այն դիտարկումը, որ իրավաբանական անձանց վրա անհրաժեշտ է տարածել նաև 2-րդ գլխի նորմերը՝ նշելով, որ հակառակ պարագայում իրավաբանական անձինք ոչ միայն կզրկվեն հիմնական իրավունքներից, այլև չեն կարող համարվել նաև սահմանադրական պարտականությունների սուբյեկտ[6]: Խնդիրն առավել ակնհայտ է ՌԴ պարագայում, երբ Սահմանադրությունը լռում է իրավաբանական անձանց հիմնական իրավունքների կրող լինելու մասին:

Ինչպես նշել ենք, ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածը թույլ է տալիս ***հիմնական իրավունքների և ազատությունների*** (եթե դրանք կիրառելի են իրավաբանական անձանց նկատմամբ) ***կրող լինելու իմաստով հանրային իշխանության հետ հարաբերություններում սուբյեկտ դիտարկել*** նաև իրավաբանական անձանց: Չնայած այն հանգամանքին, որ նորմի տարածական մեկնաբանման պայմաններում, սահմանադրական առանձին պարտականություններն (իրենց վերաբերելի) իրավաբանական անձանց ևս վերաբերելի են (ինչպես նաև նման պարտականություններ կարող են նախատեսվել նաև սովորական օրենքներով), այնուամենայնիվ կարծում ենք, որ սահմանադրական նորմերի ձևական որոշակիության ապահովման տեսանկյունից արդարացված կլինի, եթե ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածը ձևակերպվեր հետևյալ կերպ՝ «Հիմնական իրավունքները, ազատությունները ***և պարտականությունները*** տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները, ազատությունները և **պարտականությունները** իրենց էությամբ կիրառելի են վերջիններիս նկատմամբ»:

Հիմնահարցի վերաբերյալ դոկտրինալ մոտեցումները և դատական պրակտիկան: Իրավաբանական անձանց սուբյեկտիվ հիմնական իրավունքների կրող համարելու օգտին է խոսում իրավաբանական գրականության մեջ առկա այն տեսակետը, որ նման իրավունքների տրամադրումը կարևորվում է նաև տվյալ իրավաբանական անձի հետևում կանգնած ֆիզիկական անձանց (իրավաբանական անձի անդամների) իրավունքների պաշտպանության տեսանկյունից[7]: Հոլանդացի տեսաբան Ս. դեն Դեկկերվան Բիայստերֆելդի գնահատմամբ՝ դավանանքի ազատության իրավունքի կրողներ են ոչ միայն առանձին ֆիզիկական անձինք, այլ նաև՝ եկեղեցական, կրոնական համայնքները[8]: Այդպիսին է նաև ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումը[9]: Հատկանշական է, որ ՄԻԵԴ-ը ՄԻԵԿ-ի 34-րդ հոդվածի հիմքով ընդունում է գանգատներ նաև իրավաբանական անձանցից: Մասնավորապես՝ հոդվածը, որը կարգավորում է ՄԻԵԴ անհատական գանգատ ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, inter alia նշում է նաև ոչ պետական (կառավարական) կազմակերպություններին[10]: Կարծում ենք, որ Դատարանի նման մոտեցման համար, բացի ձևական դատավարական հիմքից, անհրաժեշտ է կարևորել նաև ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածի փաստակազմը, որով Բարձր պայմանավորվող կողմերին պարտավորեցնում է ապահովել «յուրաքանչյուրի» համար ՄԻԵԿ-ի 1-ին բաժնում սահմանված իրավունքները և ազատությունները: Անշուշտ, «յուրաքանչյուր» բառը պետք է մեկնաբանել առավել լայն՝ հասկանալով նաև իրավաբանական անձանց: Օրինակ՝ Կոնվենցիայի անգլերեն տեքստում «յուրաքանչյուր» բառը թարգմանված է «personality», իսկ ֆրանսերենում՝ «personne», որոնք հավասարապես ներառում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ իրավաբանական անձանց[11]: Իրավաբանական անձանց կոնվենցիոն նաև սահմանադրական իրավունքների պաշտպանության հարցն առավել առարկայական դարձավ մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտի զարգացման լույսի ներքո: Ասվածը վերաբերում է նաև միջազգային մակարդակում պաշտպանության առարկայի (մասշտաբի) ընդլայնմանը: Այս ամենի արդյունք պետք է համարել ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության ընդունումը, որով 1952 թվականից ՄԻԵԴ-ը սկսեց պաշտպանել ֆիզիկական և իրավաբանական ան-

ձանց նաև տնտեսական իրավունքները: Մասնավորապես՝ 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ ունի իրեն պատկանող սեփականության հարգանքի իրավունք….»[12]:

Հատկանշական է, որ իրավաբանական անձինք ՄԻԵԴ կարող են դիմել միայն իրենց, և ոչ թե կազմակերպության (իրավաբանական անձի) անդամների սուբյեկտիվ իրավունքների խախտման դեպքերում[13]:

Իրավաբանական անձինք կարող են հայտնվել նաև այնպիսի իրավիճակում, որ հանրային իշխանությունը, ինչպես ֆիզիկական անձանց պարագայում, փորձի կամ ուղղակի միջամտի վերջիններիս շահերին. ընդ որում նման շահերի պաշտպանությունն առնվազն թերի կլինի առանց իրավաբանական անձանց տրամադրված սահմանադրական երաշխիքների, ինչպիսիք են՝ հիմնական իրավունքները[14]: Ակնհայտորեն նշված մոտեցման օգտին է նաև պետությունների դատական պրակտիկան: Գերմանիայի Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումն այնպիսին է, որ իրավաբանական անձինք կարող են լինել հիմնական իրավունքների կրող միայն այն դեպքում, եթե վերջիններս իրենց ձևավորման և գործունեության բնույթից կախված հանդիսանում են իրենց հետևում կանգնած ֆիզիկական անձանց իրավունքների ազատ ինքնիրացման ձևեր[15]: Ֆրանսիայի սահմանադրական արդարադատության մարմնի իրավական դիրքորոշումը, որը հարցը դիտարկել է իրավաբանական անձանց իրավահավասարության լույսի ներքո, ընդգծում է, որ իրավաբանական անձանց նկատմամբ ոչ հավասար վերաբերմունքը կարող է առաջ բերել անհավասար վերաբերմունք նաև վերջիններիս հետևում կանգնած ֆիզիկական անձանց նկատմամբ, ինչն անթույլատրելի է[16]:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է կարևորել ոչ միայն իրավաբանական անձանց անդամների (օրինակ՝ կրոնական կազմակերպությունների անդամների), այլև՝ այլ ֆիզիկական անձանց շահերը, որոնք առանձին իրավիճակներում չեն կարող իրացնել իրենց իրավունքներն առանց իրավաբանական անձանց երաշխավորված սահմանադրական կարգավիճակի: Այսպես՝ մարդը չի կարող իրացնել իր տեղեկատվություն ստանալու իրավունքը, եթե չերաշխավորվի, օրինակ, մամուլի ազատությունը: Չի կարող երաշխավորվել ընտրական գործընթացների թափանցիկությունը, քաղաքական պայքարի մեջ ներգրավված անձանց ծրագրային նպատակներին ծանոթանալու էլեկտորատի իրավունքը, եթե ՁԼՄ-ները որպես իրավաբանական անձինք չլինեն տեղեկատվության ազատության իրավունքի կրողներ: Այս իմաստով կվիժեցվի նաև ժողովրդավարական պետության գաղափարը: Ներկայացված տեսակետի իմաստով արժեքավոր է մամուլի և տպագրության ազատության հիմնական իրավունքներն իրավաբանական անձանց պատկանելու վերաբերյալ ՄԻԵԴ-ի՝ Գրոպեր Ռադիո ԱԳ-ն և մյուսներն ընդդեմ Շվեյցարիայի գործի շրջանակներում հայտնած իրավական դիրքորոշումը: Նշվում է, որ *տեղեկատվություն և գաղափարներ տարածելու ազատությունը լրացնում է տեղեկատվություն և գաղափարներ ստանալու ազատությանը*: Ըստ դատարանի՝ դա ճշմարիտ է ոչ միայն տպագիր մամուլի, այնպես էլ՝ ռադիոյի և հեռուստատեսության համար: Դատարանն ընդգծում է, որ պետությունը պարտավոր է չմիջամտել տեղեկատվության փոխանցման և ստանալու գործընթացին (status negativus), քանզի և՛ ստացողը, և՛ տվողը ունեն իրենց ցանկությամբ ուղիղ կապով հաղորդակցվելու ազատություն: Այսպիսով՝ ՄԻԵԴ-ը իրավաբանական անձանց հիմնական իրավունքներով պաշտպանության հիմնահարցը արժևորվում է նաև ֆիզիկական անձանց (իրավաբանական անձի անդամ չհանդիսացող)՝ կոնկրետ դեպքում տեղեկատվություն և գաղափարներ ստանալու ազատությանը իրավունքի ապահովման իմաստով:

Այսպիսով՝ իրավաբանական անձանց սահմանադրական դիրքերը սուբյեկտիվ հիմնական իրավունքների միջոցով պաշտպանելու անհրաժեշտությունը, այլ կերպ ասած՝ իրավաբանական անձանց իրենց վերաբերելի հիմնական իրավունքների կրող ճանաչելու սահմանադրական լուծումները, կարևորվում են ոչ միայն վերջիններիս սահմանադրական կարգավիճակի հստակեցման (նրանց հետևում կանգնած անդամների), այլև իրավական, ժողովրդավարական պետության կայացման, իրավունքի գերակայության ապահովման, ֆիզիկական անձանց սուբյեկտիվ իրավունքների իրացման համար երաշխիքներ ստեղծելու տրամաբանությունից ելնելով:

Մասնավոր և հանրային իրավունքի իրավաբանական անձանց իրավական դիրքի առանձնահատկությունները՝ հիմնական իրավունքները կրելու լույսի ներքո: Ինչպես արդեն նշել ենք, առնվազն սահմանադրական մակարդակում հայկական պոզիտիվ իրականությունն այնպիսին է, որ իրավաբանական անձինք ճանաչվում են հիմնական իրավունքների կրող: Սակայն ոլորտին վերաբերող իրավաբանական գրականության, օրենսդրության, այդ թվում՝ ազգային[17], և դատական պրակտիկայի (սահմանադրական արդարադատության) հետա-

զոտման արդյունքում պարզ է դառնում, որ առկա է մասնավոր և հանրային իրավունքի իրավաբանական անձանց (այդ թվում հիմնական իրավունքներով պաշտպանվելու առանձնահատկությունների հետ կապված) տարանջատման խնդիր:

Արդեն անցած դարի կեսերին իրավաբանական գրականության մեջ ընդգծվում էր մասնավոր և հանրային իրավունքի իրավաբանական անձանց ոչ միայն տեսական, այլև պրակտիկ մակարդակում տարանջատման անհրաժեշտությունը[18]: Ցավոք, եզակի համարվող տեսակետները չստացան անհրաժեշտ աջակցություն և միայն 21-րդ դարի սկզբին ռուսական իրավունքում հայեցակարգային մակարդակով առաջ քաշվեց «հանրային իրավունքի իրավաբանական անձ» հասկացության ներմուծման անհրաժեշտությունը[19]: Առանձին հեղինակների դիտարկմամբ պետության իրավական քաղաքականության նման փորձերը կարող էին էական վնաս հասցնել իրավաբանական անձանց կայացած համակարգին[20]:

Հետխորհրդային իրավաբանական գրականության մեջ, խոսելով իրավաբանական անձանց որպես հիմնական իրավունքների կրող լինելու մասին, բավարարվում են հղում կատարելով սահմանադրական այն նորմի վրա (նման կարգավորումների առկայության դեպքում), որ իրավաբանական անձինք ևս կարող են դրանք կրել՝ առանց տարանջատելու մասնավոր և հանրային իրավունքի իրավաբանական անձանց խնդիրը: Հիմնահարցի պարզաբանման համար հայեցակարգային է իրավունքի համակարգը հանրայինի և մասնավորի բաժանելու խնդիրը:

Այսօր ժամանակակից առաջադեմ պետությունների իրավական համակարգերն ընդունում են իրավունքի հանրային և մասնավոր ճյուղերի բաժանման սկզբունքը[21], ինչպես նաև հանրային և մասնավոր իրավաբանական անձանց տարանջատման խնդիրը[22]:

Այս իմաստով, թերևս անվիճելի է գերմանացի իրավագետ, սոցիոլոգ Գուստավ Ռադբրուխի այն դիտարկումը, որ «երբ պարտականությունը ծագում է հարաբերության մյուս կողմի հրամանի հիման վրա, ապա գործ ունենք հանրային իրավունքի հետ, իսկ մասնավոր իրավունքի պարագայում գործ ունենք պարտավոր կողմի ինքնաենթարկվելու հանգամանքի հետ»[23]:

Համակարգելով իրավաբանական գրականության մեջ առկա մոտեցումները, որոնք փորձ են կատարում հերքել հանրային ոլորտի իրավաբանական անձանց գոյությունը՝ իրավաբանական անձ հասկացությունը կապելով միայն մասնավոր ոլորտի հետ, արձանագրում ենք, որ դրանց հիմքում առաջին հերթին դրված է այն հիմնավորումը, որ հիմնախնդիրը կարգավորող փաստաթղթերը մասնավոր ոլորտը կարգավորող ակտերն են[24]: Հերքելով պետական իրավաբանական անձանց գոյությունը (հանրային իրավունքի իրավաբանական անձ)՝ առանձին տեսաբաններ գտնում են, որ չկա «հանրային ոլորտի իրավաբանական անձ» հասկացությունը ներմուծելու անհրաժեշտություն, քանզի վերջիններս ստեղծվում և գործում են մասնավոր իրավունքի հիման վրա[25]: Կարծում ենք, որ նման մոտեցումները խիստ մեխանիկական են:

Այսօր, իրավաբանական գրականության մեջ, արդարացիորեն ընդգծվում է, որ չնայած այն հանգամանքին, որ «իրավաբանական անձ» հասկացության արմատները գալիս են ցիվիլիստիկայից[26], այնուամենայնիվ այն էական խնդիրներ ունի լուծելու նաև հանրային իրավունքի ոլորտում և արդարացիորեն ներխուժել է նաև այստեղ[27]:

Այս իմաստով, ակնհայտ են խնդիրները նաև ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը՝ տալով իրավաբանական անձանց հասկացությունը (հոդված 50), տարբերակելով իրավաբանական անձանց տեսակները (հոդված 51-րդ), չի անդրադառնում հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց[28]: Չնայած այն հանգամանքին, որ քաղաքացիական օրենսգիրքը չի տարանջատում հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց, սակայն առկա են բազմաթիվ իրավաբանական անձինք, ովքեր ունեն հանրային կարգավիճակ, որոնց իրավական վիճակի, դրանց ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման կարգի, ինչպես նաև պետական այլ մարմինների հետ փոխհարաբերությունները կարգավորվում են ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ՝ առանձին օրենքներով: Այդպիսին է, օրինակ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որի կարգավորման առարկան, ինչպես երևում է ակտի վերնագրից, վերաբերում է պետական ոչ առևտրային կազմակերպություններին, որոնք ոչ այլ ինչ են, քան հանրային իրավունքի իրավաբանական անձ:

Հատկանշական է, որ ի տարբերություն մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց, որոնք ստեղծվում են հիմնադիրների մասնավոր ինքնավարության հիման վրա, հանրային իրավունքի իրավաբանական անձինք, որպես կանոն, ստեղծվում են պետական մարմնի (օրինակ՝ կառավարության) ընդունած իրավական ակտի հիման վրա: Հատկանշական է ՀՀ քաղ. օր-ի 55-րդ հոդվածի իրավակարգավորումը, համաձայն որի՝ «Իրավաբանական անձի հիմնադիր փաստաթուղթը նրա

հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար *լիազորված մարմնի*[29] հաստատած կանոնադրությունն է»:

Էապես կարևորվում է հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց իրավունակության բովանդակության և ծավալի խնդիրը՝ կապելով այն, հատկապես, հանրային ոլորտի կազմակերպության կանոնադրությունում վերջինիս գործունեության առարկան և նպատակները պարտադիր սահմանելու հետ: Հատկանշական է, որ մասնավոր ոլորտի իրավաբանական անձանց իրավունակությունը, որպես կանոն, ընդհանուր է, որը *կարող է* սահմանվել հիմնադիր փաստաթղթում, իսկ հանրային ոլորտինը՝ հատուկ, այսինքն, հիմնադիր փաստաթղթում *սահմանվում են* նրա գործունեության առարկան և նպատակները[30]: Այս խնդիրը չպետք է շփոթել իրավունակության ծագման և դադարեցման հետ: Իրավաբանական անձանց իրավունակության ծագման և դադարեցման վերաբերյալ հատուկ կարգավորումներ չկան, այսինքն՝ գործում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված իրավունակության ծագումը՝ մարմինների ստեղծման (56-րդ հոդվածի 3-րդ կետ) և դադարումը՝ լուծարման ավարտի (69-րդ հոդվածի 7-րդ կետ) հետ կապված իրավակարգավորումները:

Աշխատանքն անհրաժեշտ խորություն չէր ունենա, եթե անդրադարձ չկատարվի հանրային և մասնավոր իրավաբանական անձանց՝ սուբյեկտիվ հիմնական իրավունքներ և ազատություններ կրելու ունակության առանձնահատկություններին: Այս իմաստով, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածը հիմնական իրավունքներն իրավաբանական անձանց վրա տարածելու իմաստով, որպես նորմի փաստակազմի պարտադիր հատկանիշ նշում է, որ այդ իրավունքները պետք է կիրառելի լինեն այդ անձանց (առհասարակ իրավաբանական անձանց) նկատմամբ: Պետք է նշել, որ այս դեպքում սահմանադիրը ոչ թե խնդիր է դրել տարբերակել հիմնական իրավունքների՝ հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց վերաբերելի լինելու հանգամանքը, այլև փաստակազմի նշված հատկանիշի նպատակը ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերելիության իմաստով տարբերակումն է:

Մինչ հիմնական իրավունքների կրելու իմաստով հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց առանձնահատկություններին անդրադառնալն անհրաժեշտ է նշել, որ վերը նշված հոդվածի՝ «*որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են*» ձևակերպումը նշանակում է, որ գոյություն ունեն առանձին հիմնական իրավունքներ, որոնք իրենց էությամբ կարող են պատկանել միայն ֆիզիկական անձանց: Օրինակ, կյանքի, հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության, ընտրելու, սեռից, ռասայից և մաշկի գույնից կախված խտրականության արգելքի վերաբերյալ նեգատիվ պահանջից բխող սուբյեկտիվ իրավունքը և այլ հիմնական իրավունքները, որոնք իրենց էությամբ վերաբերելի են միայն ֆիզիկական անձին, դժվար թե հնարավոր լինի տարածել իրավաբանական անձանց վրա:

Իրավաբանական անձանց վերաբերելի հիմնական իրավունքներից են՝ պատշաճ վարչարարության իրավունքը, սեփականության իրավունքը, վնասի հատուցման իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, կարծիքի արտահայտման ազատությունը և այլն: Այլ կերպ ասած, իրավաբանական անձանց համար հնարավոր է հիմնական իրավունքներով պաշտպանություն, եթե այդ հիմնական իրավունքը կապված չէ մարդու ֆիզիկական և հոգեկան ոլորտների հետ:

Այն հիմնական իրավունքները, որոնք կապված չեն մարդու ֆիզիկական և հոգևոր ոլորտների հետ առանց բացառության, տարածվում են մասնավոր իրավաբանական անձանց վրա (եթե նրանք հատուկ լիազորությունների ուժով հանրային գործառույթներ չեն իրականացնում, որի պարագայում դառնում են հիմնական իրավունքներով պարտավորված կողմ): Նույնը չի կարելի ասել հանրային ոլորտի իրավաբանական անձանց համար: Այստեղ կարևոր է այն մոտեցումը, որ չի կարող հանրային իշխանության մարմինը, որը ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով հիմնական իրավունքներով սահմանափակված կողմն է, այսինքն՝ հիմնական իրավունքների հասցեատեր, լինել նաև այդ իրավունքի կրող: Սակայն կան բացառություններ, որոնք հնարավորություն են ընձեռում հանրային ոլորտի իրավաբանական անձանց պաշտպանվել հիմնական իրավունքներով: Այդպիսի սահմանադրական հնարավորություն ունեն հեռուստառադիո ընկերությունները՝ հեռուստատեսության և ռադիոյի ազատությամբ պայմանավորված հաղորդումների ապահովման, սակայն ոչ սեփականության իրավունքի մասով: Այն, որ բացի մասնավորից նաև հանրային ոլորտի մամուլի, հեռուստառադիո ընկերությունների և տեղեկատվության այլ միջոցների գործունեության ազատությունը ենթակա է պաշտպանության հիմնական իրավունքների միջոցով երևում է նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի բովանդակությունից, համաձայն որի՝ «… Պետությունը երաշխավորում է տեղեկատվական,

կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող ***անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը***»:

Նույն ռեժիմը գործում է նաև հանրային իրավունքի իրավաբանական անձ բարձրագույն ուսումնական հաստատությունների համար՝ կապված գիտության ազատության իրենց հատուկ գործառույթի հետ[31]:

Այսպիսով, հիմնական իրավունքներն առանձին դեպքերում տարածվում են ոչ միայն մասնավոր, այլ նաև հանրային ոլորտի իրավաբանական անձանց վրա: Դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ հանրային ոլորտի իրավաբանական անձինք, հանդիսանալով հանրային իշխանության մաս, կախված իրենց գործունեության բնույթից (***կոնկրետ սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առարկայից***), գործում են պետությունից անկախ և այդ իրավունքների պաշտպանության իմաստով կարող են հակադրվել պետությանը[32]:

Այլ է հարցը նաև այն դեպքերում, երբ հանրային իրավունքի իրավաբանական անձինք հենվում են դատավարական հիմնական իրավունքների վրա, քանի որ սահմանադրական այդ դրույթները ձևական առումով պատկանում են ոչ թե հիմնական իրավունքներին, այլ բովանդակում են դատավարական օբյեկտիվ սկզբունքներ, որոնք գործում են ցանկացած դատավարության համար, ուստի պետք է ծառայեն յուրաքանչյուրին, ով դատավարական նորմերին համապատասխան եղել է դատավարության մասնակից: Հետևաբար, հանրային իրավունքի իրավաբանական անձինք նաև դատավարական հիմնական իրավունքների սուբյեկտ են[33]: Այս իրավունքների կրող լինելու հանրային իրավունքի իրավաբանական անձանց հնարավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ, եթե հնարավոր է համարվում, օրինակ, պաշտպանվել խոսքի ազատության հիմնական իրավունքին ապօրինի միջամտության դեպքում, ապա նման պաշտպանությունը հնարավոր չի լինի, եթե վերջիններս չհամարվեն նաև այն հիմնական իրավունքների կրող, որոնց միջոցով կիրականացվի այդ պաշտպանությունը: Այդպիսին են օրինակ՝ դատական պաշտպանության իրավունքը, վնասի հատուցման իրավունքը, պատշաճ վարչարարության իրավունքը և այլն:

Նման հետևությունների արդյունքում անհրաժեշտ է նաև նշել, որ եթե հիմնավոր է հանրային իրավունքի իրավաբանական անձանց սուբյեկտիվ հիմնական իրավունքների կրող լինելու վերաբերյալ մոտեցումը, ապա կա անհրաժեշտություն այս առումով ընդլայնելու ՄԻԵԴ-ի պրակտիկան՝ կապված հանրային իրավունքի իրավաբանական անձանց՝ կոնվենցիոն իրավունքներով պաշտպանվելու հնարավորության հարցում՝ հաշվի առնելով, որ ՄԻԵԴ-ի ընդհանուր մոտեցումը «ոչ պետական (կառավարական) կազմակերպություններ» հասկացության վերաբերյալ այնպիսին է, որ նշված կազմակերպության մոտ բացակայում է պետահիշխանական գործառույթը կամ նրա անունից հանդես գալու հանգամանքը, որի մասին խոսվել է սույն աշխատանքի շրջանակներում:

---

[1] Рывкин К.А. Юридические лица как носители основных прав: российская и европейская практика/ Журнал российского права, N11, 2007. С. 31-32.

[2] Савинко Т. В. Судебная защита налогоплательщика // Бухгалтерский учет. 2002. N 3. Кузнецов В. Конституция и права юридических лиц. Электронный ресурс, 1997. http://www.juristlib.ru/book_496.html (26.01.2016): Այսպես, Բարձրագույն արբիտրաժային դատարանի վերահսկող մարմնի որոշմամբ՝ N K4-H-7/2648 գործի շրջանակներում պատասխանողին (ով իրավաբանական անձ էր) մերժվեց ՌԴ Սահմանադրության 54-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման մեջ՝ նշելով, որ նշված նորմը գտնվում է ՌԴ Սահմանադրության 2-րդ գլխում, որը վերաբերում է մարդկանց, այլ ոչ թե իրավաբանական անձանց: Ավելի ուշ, ՌԴ Սահմանադրական դատարանը կատարեց փորձեր, որոնք ուղղված էին իրավաբանական անձանց սուբյեկտիվ հիմնական իրավունքների՝ իր վարույթի շրջանակներում պաշտպանությանը: Մասնավորապես, 1996 թվականի հոկտեմբերի 24-ի որոշման շրջանակներում, որի պարագայում սահմանադրական դիմում էր ներկայացվել իրավաբանական անձի կողմից, ՌԴ ՍԴ-ն իրավաբանական անձանց սուբյեկտիվ հիմնական իրավունքները խախտվելու հիմքով,

www.journal.lawinstitute.am

իրավաբանական անձից դիմումի ընդունելու հանգամանքը, հիմնավորեց հետևյալ իրավական դիրքորոշմամբ: ՌԴ ՍԴ-ն գտավ, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՌԴ Սահմանադրական օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների խախտման հիմքով ՌԴ ՍԴ անհատական կամ կոլեկտիվ գանգատով դիմելու իրավունքն ունեն քաղաքացիները, ում իրավունքները և ազատությունները խախտվել են օրենքով, կոնկրետ գործի սահմաններում կիրառելի է նաև քաղաքացիների միավորման նկատմամբ:

[3] Конституция Российской Федерации. Комментарий / Под общей редакцией Б.Н. Топорнина и др. М., 1994. С. 202 - 203).

[4] Витрук Н. В. Конституционное правосудие в России (1991 - 2001 гг.): Очерки теории и практики. М., 2001. С. 266.

[5] Հովհաննիսյան Գ. Հիմնական իրավունքների երրորդային գործողությունը կամ ինչ է ասում մեզ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ մասը: (http://www.lex.am/docs/yerrordayin.pdf) (26.01.2016?):

[6] Кузнецов В. Конституция и права юридических лиц // Российская юстиция. 1997. N 4.

[7] Рывкин К. А. Юридические лица как носители основных прав: российская и европейская практика. «Журнал российского права», 2007, N 11.

[8] Dekker van Bijsterveld S. C. den. De verhouding tussen kerk en staat in het licht van Grondrechten. Zwolle, 1988. P. 85.

[9] Մանրամասն տե՛ս, http://swarb.co.uk/x-v-denmark-echr-1976/, References: 7374/76, (1976) 5 DR 157.

[10] Հատկանշական է, որ ՄԻԵԴ-ի ընդհանուր մոտեցումը «ոչ պետական (կառավարական) կազմակերպություններ» հասկացության վերաբերյալ այնպիսին է, որ նշված կազմակերպության մոտ բացակայում է պետահիշխանական գործառույթը կամ նրա անունից հանդես գալու հանգամանքը: Այս մասին մանրամասն տե՛ս, Туманов В.А. Европейский Суд по правам человека. Очерк организации и деятельности. М, 2001. С. 39-40. Իրավաբանական անձանց գանգատի հիման վրա ՄԻԵԴ-ում քննված հայտնի գործերից են՝ Բելգիայի ուսուցիչների ազգային արհմիությունն ընդդեմ Բելգիայի, «Կյանքի համար բժիշկները» պլատֆորմն ընդդեմ Ավստրիայի, «Սանդի թայմս» ընդդեմ Միացյալ Թագավորության: Դատարանը բոլոր նշված դեպքերում կազմակերպություններին ճանաչել է պատշաճ դիմող, նույնն է թե՝ կոնվենցիոն իրավունքի կրող:

[11] Տե՛ս, Бюллетень Европейского Суда по правам человека. Российское издание. 2003. N 1. С. 2-3. Freshfields Bruchkhaus Deringer. October 2001.

[12] Տե՛ս, Протокол N 1 к Европейской конвенции о защите прав человека и основных свобод от 20 марта 1952 г. // СЗ РФ. - 2001. - N 2. Ст. 163.

[13] Մանրամասն տե՛ս, ՄԻԵԴ 24.10.1995. Appl. No. 14807/89 Agrotexim and Others v. Greece.

[14] Mutius A. v., Art. 19, Abs. 3 in Dolzer R./Vogel K. (Hrsg.), Bonner Kommentar zum Grundgesetz, Dez. 1999.

[15] BverfGE 21, 362(369). http://www.center-bereg.ru/o4513.html (27.01.2016).

[16] C. C. 81-132 DC, 16.01.1982. P. 23. http://www.center-bereg.ru/o4513.html (27.01.2016).

[17] 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում համայնքը (հոդված 180, մաս 2) և միջհամայնքային միավորումները (հոդված 189, մաս 3) ճանաչվեցին հանրային իրավունքի իրավաբանական անձեր: Առանձին օրենսդրական լուծումները «հանրային իրավունքի իրավաբանական անձ» հասկացության որոշակիացման հարցում, արդեն ժամանակի հրամայական է:

[18] Братусь С. Н. Юридические лица в советском гражданском праве. М., 1947. С. 62—63.

[19] Концепция развития корпоративного законодательства на период до 2008 г. (подготовлена Минэкономразвития России) // Закон. 2006. N 9. С. 27.

[20] Серова О. А. Типы управления юридическим лицом: к постановке вопроса // Юрист. 2006. N 2. С. 24.

[21] Скакун О.Ф. Теория государства и права: Учебник. Харьков: Консум; Ун-т внутр. дел, 2000. С 264.

[22] Այսպես՝ Իտալիա (Իտալիայի Քաղ.օր. հդ. 11 (Persone giuridiche pubbliche), Իսպանիա (Iban Ivan C. Einfuhrung in das spanische Recht. 1. Aufl. Nomos. 1995. S. 170), Ֆրանսիա (Hubner U., Constantinesco V. Einfuhrung in das franzosische Recht. 4. Aufl. Beck, 2001. S. 173 - 174), և այլն:

[23] Radbruch G. Einfuhrung in die Rechtswissenschaft. 11. Aufl. 1964. S. 88.

[24] Рахманкулов Х. Р. Законодательство Республики Узбекистан о юридических лицах // В кн.: Субъекты гражданского права. Т. 1. Алматы, 2001. С. 51. Solotych S. Das Zivilgesetzbuch der Russischen Foderation. Erster Teil. Einfuhrung. Nomos. Baden-Baden, 1996. S. 30. Чантурия Л. Гражданское право и юридические лица публичного права: особенности правового регулирования. Доклад, сделанный на международной научно-практической конференции "Гражданское право в системе права" в Алматы (Казахстан) 17 мая 2007 года. http://www.cac-civillaw.uni-bremen.de/publikationen/chanturia.jur.personen.ru.rtf (27.01.2016).

[25] Մանրամասն տե՛ս, Ибрагимова Т. А. Юридические лица в Кыргызской Республике. IV 2 (http://www.cac-civillaw.uni-bremen.de/beitraege/jur-per-kir.ru.rtf) (27.01.2016), Асьянов Ш. Юридические лица в Республике Узбекистан. IV 2 / материалы международных научно-практических конференций «вопросы совершенствования законодательства о юридических лицах» 3-4 июня 2009 г. С. 22-25.

[26] Schnizer H., Die juristische Person in der Kodifikationsgeschichte des AGBG in: FS f. Walter Wilburg. 1965. S. 144.

[27] Knieper R. Gesetz und Geschichte. Nomos, 1996. S. 66. Также на русском языке: Книпер Р. Закон и история. Алматы, 2005. С. 58 - 61.

[28] Հատկանշական է, որ Վրաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1509-րդ հոդվածի 1-ին

մասի համաձայն՝ հանրային իրավունքի իրավաբանական անձինք են՝ պետությունը, ինքնակառավարվող միավորները, պետության կողմից օրենսդրության կամ վարչական ակտի հիման վրա ստեղծված իրավաբանական անձինք, որոնք չունեն Քաղաքացիական օրենսգրքով կամ «Ձեռնարկատերերի մասին» օրենքով սահմանված կազմակերպաիրավական ձևեր, պետական կազմակերպությունները և պետական ֆոնդերը, որոնք չեն ձևավորվել Քաղաքացիական օրենսգրքի կամ «Ձեռնարկատերերի մասին» օրենքի հիման վրա, օրենսդրության հիման վրա ստեղծված հանրային նպատակներ հետապնդող ոչ պետական կազմակերպությունները (օրինակ՝ կուսակցությունները), Վրացական ուղղափառ եկեղեցին և այլն: Բացի Քաղաքացիական օրենսգրքի՝ հիմնահարցին վերաբերող նշված կարգավորումներից, որոնք ունեն ինստիտուցիոնալ բնույթ՝ Վրաստանի օրենսդիր մարմնի կողմից ընդունվել է նաև օրենք «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասին» (28.05.1999թ.):

[29] Օրինակ՝ «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 1054-Ն որոշմամբ:

[30] Նման իրավական դիրքորոշում է հայտնել նաև Վրաստանի Գերագույն դատարանը հանրային ոլորտի իրավաբանական անձանց իրավունակության վերաբերյալ 22. 02.2001 թվականի իր որոշման մեջ:

[31] Զաքս Միխայել Գերմանիայում հիմնական իրավունքների ընդհանուր ուսմունքի հիմունքներ: Սուբյեկտիվ հանրային իրավունքը վարչական իրավունքում / Մ. Զաքս.-Եր.: Տիգրան Մեծ, 2012. էջ 51:

[32] Crones L. Op. cit. S. 80. Burkens M. C. Algemene leerstukken van grondrechten naar Nederlands constitutionel recht. Zwolle, 1989. P. 58.

[33] Հովհաննիսյան Գ. Հիմնական իրավունքների երրորդային գործողությունը կամ ինչ է ասում մեզ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ մասը: (http://www.lex.am/docs/yerrordayin.pdf) (26.01.2016թ):

Օգտագործված գրականության ցանկ

1. Рывкин К.А. Юридические лица как носители основных прав: российская и европейская практика/ Журнал российского права, N 11, 2007.
2. Савинко Т. В. Судебная защита налогоплательщика // Бухгалтерский учет. 2002. N 3.
3. Кузнецов В. Конституция и права юридических лиц Электронный ресурс, 1997. http://www.juristlib.ru/book_496.html (26.01.2016 г.).
4. Конституция Российской Федерации. Комментарий / Под общей редакцией Б.Н. Топорнина и др. М., 1994. С. 202 - 203.
5. Витрук Н. В. Конституционное правосудие в России (1991 - 2001 гг.): Очерки теории и практики. М., 2001. С. 266.
6. Հովհաննիսյան Գ. Հիմնական իրավունքների երրորդային գործողությունը կամ ինչ է ասում մեզ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ մասը: (http://www.lex.am/docs/yerrordayin.pdf) (26.01.2016Г):
7. Кузнецов В. Конституция и права юридических лиц // Российская юстиция. 1997. N 4.
8. Рывкин К. А. Юридические лица как носители основных прав: российская и европейская практика. “Журнал российского права”, 2007, N 11.
9. Dekker van Bijsterveld S. C. den. De verhouding tussen kerk en staat in het licht van Grondrechten. Zwolle, 1988. P. 85.
10. Туманов В.А. Европейский Суд по правам человека. Очерк организации и деятельности. М, 2001. С. 39-40.
11. Бюллетень Европейского Суда по правам человека. Российское издание. 2003. N 1. С. 2-3.
12. Протокол N 1 к Европейской конвенции о защите прав человека и основных свобод от 20 марта 1952 г. // СЗ РФ. 2001. N 2.
13. Mutius A. v., Art. 19, Abs. 3 in Dolzer R./Vogel K. (Hrsg.), Bonner Kommentar zum Grundgesetz, Dez. 1999.
14. BverfGE 21, 362(369). http://www.center-bereg.ru/o4513.html (27.01.2016).
15. C. C. 81-132 DC, 16.01.1982. P. 23. http://www.center-bereg.ru/o4513.html (27.01.2016).
16. Братусь С. Н. Юридические лица в советском гражданском праве. М., 1947.
17. Концепция развития корпоративного законодательства на период до 2008 г. (подготовлена Минэкономразвития России) // Закон. 2006. N 9.
18. Серова О. А. Типы управления юридическим лицом: к постановке вопроса // Юрист. 2006. N 2.
19. Скакун О.Ф. Теория государства и права: Учебник. Харьков: Консум; Ун-т внутр. дел, 2000.
20. Radbruch G. Einfuhrung in die Rechtswissenschaft. 11. Aufl. 1964. S. 88.
21. Рахманкулов Х. Р. Законодательство Республики Узбекистан о юридических лицах // В кн.: Субъекты гражданского права. Т. 1. Алматы, 2001.
22. Solotych S. Das Zivilgesetzbuch der Russischen Foderation. Erster Teil. Einfuhrung. Nomos. Baden-Baden, 1996. S. 30
23. Чантурия Л. Гражданское право и юридические лица публичного права: особенности правового регулирования Доклад, сделанный на международной научно-практической конференции «Гражданское право в системе права» в Алматы (Казахстан) 17 мая 2007 года. http://www.cac-civillaw.uni-bremen.de/publikationen/chanturia.jur.personen.ru.rtf (27.01.2016).

24. Ибрагимова Т. А. Юридические лица в Кыргызской Республике. IV 2 (http://www.cac-civillaw.uni-bremen.de/beitraege/jur-per-kir.ru.rtf) (27.01.2016),
25. Асьянов Ш. Юридические лица в Республике Узбекистан. IV 2 / материалы международных научно-практических конференций «вопросы совершенствования законодательства о юридических лицах» 3-4 июня 2009 г.
26. Schnizer H., Die juristische Person in der Kodifikationsgeschichte des AGBG in: FS f. Walter Wilburg. 1965. S. 144.
27. Knieper R. Gesetz und Geschichte. Nomos, 1996. S. 66. Также на русском языке: Книпер Р. Закон и история. Алматы, 2005.
28. Զաքս Միխայել Գերմանիայում հիմնական իրավունքների ընդհանուր ուսմունքի հիմունքներ: Սուբյեկտիվ հանրային իրավունքը վարչական իրավունքում / Մ. Զաքս.-Եր.: Տիգրան Մեծ, 2012.:
29. Crones L. Op. cit. S. 80. Burkens M. C. Algemene leerstukken van grondrechten naar Nederlands constitutionel recht. Zwolle, 1989.

Манук Мурадян
Начальник юридического факультета академии
образовательного комплекса полиции РА,
кандидат юридических наук, доцент

РЕЗЮМЕ

Конституционно-правовые вопросы разделения юридических лиц частного и публичного права

В научной статье основное внимание уделяется одному из актуальных вопросов теории права, а конкретно необходимости разделения юридических лиц на частные и публичные. В работе освещены особенности реализации основных прав юридическими лицами частного и публичного права. А также анализируется позитивное и прецедентное право отдельных государств, связанных с рассматриваемой проблемой. Особое внимание уделяется прецедентному праву ЕСПЧ.

***Ключевые слова**: юридическое лицо публичного права, юридическое лицо частного права, основные права, прецедентное право.*

Manuk Muradyan
Head of the Faculty of Law at Academy of Police
Educational Complex of RA
Candidate of Legal Sciences, Associate Professor

SUMMARY

Constitutional issues of separation of legal entities on private and public law

The scientific article describes one of the actual issues of the theory of law, particularly about needs of separation legal entities on private and public law. In the article the primary stress falls upon the problem of the features of the exercise of fundamental rights by entities of private and public law. The article also analyzes the positive and precedent law of other states related to this issue. The case law of the ECHR is also stressed.

***Key words**: legal entities of private law, legal entities of public law, fundamental rights, precedent law.*